

Գլուխ Ա.

ՎԱՆՔԻ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

Մեր հին մատենագիրները Սանահնի վանքի հիմնադրման մասին տալիս են բավական շատ, բայց միմյանց հակասող տեղեկություններ։

Այդ տեղեկությունները կարող ենք բաժանել երեք խմբի.

ա. Վանքի հիմնարկությունից առաջ նրա տեղում կանգնեցրած խաչի և կառուցած մատուռի կամ եկեղեցու մասին։

բ. Աստվածածին եկեղեցու շինության մասին Բագրատունյաց Աբաս թագավորի ժամանակ (929—953)։

գ. Աշոտ Ողորմածի ժամանակ (953—977) վանքի հիմնարկության և միաբանությունը կազմակերպելու մասին։

Վանքի տեղում քրիստոնեության մուտքի ժամանակ խաչ կանգնեցնելու կամ եկեղեցի շինելու մասին մեր ունեցած տեղեկությունները հիմնված են միայն ավանդությունների վրա, և հին մատենագրության մեջ ոչ մի ակնարկ չկա։

Այդ մասին առաջին անգամ տեղեկություն է տալիս 19-րդ դարի սկզբի հեղինակ Հովհաննես Ղրիմեցին։ Նա գրում է, որ Սանահնի եկեղեցիներից մեկն ըստ ավանդության հիմնարկված է 4-րդ դարի սկզբին և ենթադրում է, որ Զաքարյան տոհմի տապանատան արևելյան կողմում գտնվող ավերակներն այդ հնագույն եկեղեցուն են պատկանում[1]։

Այդ ավերակներն այժմ էլ կան տեղում և պատկանում են արտաքուստ ուղղանկյուն քառանկյունի և ներքուստ խաչաձև գմբեթավոր մի եկեղեցու, որի չորս անկյունների վրա եղել են չորս նեղ և երկարավուն ավանդատներ՝ արևելակողմի կիսաբոլոր աբսիդով։ Այժմ այդ տաճարից գետնի երեսին մնացել են միայն հարավային կողմի երկու ավանդատները և հարավային ու արևելյան աբսիդների որոշ մասերի մնացորդները առանց երեսապատ քարերի, որոնք այդ վիճակում էլ, առանց պեղումների, լիակատար հնարավորություն են տալիս գաղափար կազմելու տաճարի ընդհանուր ձևի մասին։

Պարզ է, որ այս տաճարն իր նեղ ու երկարավուն ավանդատներով շատ հին չի կարող լինել։ Նա իր հատկանշական մնացորդներով կարող է պատկանել միայն 11—13-րդ դարերին, իսկ 4—5-րդ դարերում կառուցում էին հարավից-հյուսիս ձգված ավանդատներ միայն։

Նշանակում է, Զաքարյանների տոհմա-

[1] Описание монастырей Ахпатского и Санагинского архимандрита Иоанна Крымского, СПБ, 1863, стр. 47.